ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/11

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միհեր Անանյանի

Մասնակցությամբ՝ Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ՝ Ի. Եղիազարյանի (Լիազորագիր տրված՝ 21.01.2019թ.)

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.01.2019թ. թիվ 26-3/435-19 գրությամբ «Նյու Պրինտ Սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 10.01.2019թ. թիվ 01/61-99 գրության հիման վրա, 16.01.2019թ. թիվ 26-3/435-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Նյու Պրինտ

Սերվիս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Նյու Պրինտ Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Նյու Պրինտ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«Նյու Պրինտ Սերվիս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/11 ընթացակարգի շրջանակներում 22.01.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 10.01.2019թ. թիվ 01/61-99 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.12.2018թ. որոշմամբ 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Նյու Պրինտ Սերվիս» ՍՊԸ-ն:

Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ 17.12.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե:

ՀՀ ՊԵԿ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական

բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 2577 ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է 2-րդ չափաբաժնի մասով մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/11 ընթացակարգի շրջանակներում 22.01.2019թ. ժամը 10:00-ին նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2019/11 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ԱՄ-2019/11 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 13.12.2018թ. հայտ է ներկայացրել «Նյու Պրինտ Սերվիս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.12.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Նյու Պրինտ Սերվիս» ՍՊԸ-ն 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 20.12.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Նյու Պրինտ Սերվիս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 2 577 ՀՀ դրամի չափով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2018թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.01.2019թ. թիվ 26-3/435-19 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 10.01.2019թ. թիվ 01/61-99 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 13.12.2018թ. հայտ է ներկայացրել «Նյու Պրինտ Սերվիս» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 1 400 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.12.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Նյու Պրինտ Սերվիս» ՍՊԸ-ն 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 20.12.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Նյու Պրինտ Սերվիս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 2 577 ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ***ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը գտնում եմ, որ «Նյու Պրինտ Սերվիս» ՍՊԸ-ը «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.01.2019թ. թիվ 26-3/435-19 գրությամբ «Նյու Պրինտ Սերվիս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00477428) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Նյու Պրինտ Սերվիս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**